

այն օրէն ՚ի վեր այս հիւրատեաց գաւառը տակու առակու առ տակաւ թողարկին . աղ գարնան գեղեցիկ առաւտաները իրէնց երդոց ձայները չը լսուեցան . պարագայները լուիկ և ախուր մնացին . տունկերուն վիտաակար թրթուռները զօր ատեն մը թռչունները կը ջնջէին , սակալի եղանակաւ սկսան բաղմաւ պատիել ծաղլիները եւ տերեւները խանձեցին . այնպէս որ ծառերը իրենց տերեւներէն մերի մնացին , ինչպէս ձըմեռուան մէջ տեղ . և շար տղաքները որյառաջուցինքաղքահամպառուղները կը վայէլէին առատութեամբ , անոնց աճիլը չը տեսան :

Մեր ամենամեծ բարութեան համար Աստուած բնութիւնը կը կարգադրէ , կանոնը խանգարելը ինքը զինքը պատժել ուզել կը նշանակէ :

## ՍՐԻՆԳ ՀՈՎՈՒԾԿԱՆ

Մէկ թագաւոր գանձապետ միունէր , որն որ հովուական վիճակէն իր տաղանդով և յատկութեամբ մինչեւ բարձր պաշտօնի հասեր էր . թըշնամիները այս բարձր յաջողութեան վրայ նախանձած՝ զանի ամբաստաննեցին իշխանինք քով . թէ աէրութեան գանձերը իրեն շահուն կը ծառայեցը ներ . աւելցուցին՝ թէ մասնաւոր քարյորի մը մէջ մէկ երկաթէ դռով աւրացած կը պահպանէր :

Թագաւորը ուզեց ստուգել գործը . այցելութիւն ըրաւ գանձապետին , և ցուցնել տուաւ բոլոր յարկերը . և նշարեց երկաթէ դռու մը , հրամա-

յից որ բանան , այս տեղ մասած ժամանակ ինչ եղաւ իր զարմանքը , մի միացն չըստ որմերը նշմարեց , և բոլոր կահկարասիք էին , գեղիկական սեղան մը և յարդէ աթօռ մը , սեղանին վրայ կը գտնուեն հովուական սրինգ , ցուպ , եւ մէկ մախաղ , պատուհանը կանանչաղաղարդ մարգագետիններու և անտառատիվիտ լիռներու վրայ կը նայէր :

Իմ տղայութեանս ատեն , ըսաւ գանձապետը , ես կը պահպանէի իմ ոչխարներս , դու մը իմ թագաւորս , զիս ձեր պալատը հրաւիրեցիք , իմ այս աստիճան հասնելէն ՚ի վեր օրը մէկ ժամ իմ նախկին վիճակիս քաղցր զրւարձութիւնները ՚ի յուշ կածէի , և ես իմ սրինգով կը կրինէի այն երգերը , զօր ատեն մը ՚ի փառաբանութիւն Աստուծոյ կ'երգէի : ԱՇ , Տէր Արքայ , թող տուր որ վերադառնամ՝ իմ հոյրենեաց դաշտերը , որ պալատի ամեն պերձութեանց մէջէն աւելի գերերջանիկ կեանք մը ունեի : Թագաւորը շատ բարկացած վատ պալատականներուն դէմ , որ կը զրպարէին այս բարեբարոյ մարդը , գրկեց պաշտոնելով , որ զինքը բնաւ չը թողու : Ոչ ոսկին , ոչ մէծութիւնը մարդու երջանիկ կ'ընէ :

Ճշմարիսութիւններու առաքիւնի սրախ մէջ կը գտնուի :

1875 Մարտ 25 Թարգ . ՚ի Գաղլերէնէ  
Ուիրապ - ՚ Նիշու Յ . Թոգուշէն :  
յԵրանակէ :